Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ոսկեվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Մոտիվացիան որպես ուսուցման կարևորագույն մաս »

Մենթոր՝ Նաիրա Ավանյան

Ուսուցիչ՝ Նոնա Ալեքսանյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3
Հիմնական մաս
1.1 Տարրական դպրոցի սովորողների հոգեբանամանկավարժական նկարագիրը-4
1.2 Տարրական դպրոցի սովորողների փոխհարաբերությունները մեծահասակների և հասակակիցների հետ----------11
1.3 Ուսումնական գործընթացի հանդեպ կրտսեր դպրոցականի մոտիվացիայի բարձրացմանն ուղղված մանկավարժական պայմաններ---------- 14
Փորձագիտական աշխատանք
2.1 Տարրական դպրոցում սովորողների ուսման մոտիվացիայի բացահայտումը 15
Եզրակացություն ----------19
Օգտագործված գրականության ցանկ ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ուսուցիչ
պարոններ ու քույրեր,
զգուշությամբ ու երկյուղածությամբ
մոտեցեք դաստիարակության գործին.
խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը:
Դաստիարակելու կոչված եք սերունդ մը,
որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ՝
ազգ մը կը խորտակեք վերջը»:

ԿՈՄԻՏԱՍ

Կրթությունը միշտ էլ կարևոր նշանակություն է ունեցել մարդկության պատմության բոլոր փուլերում: Որպես այդպիսին, հատկապես կարևոր դեր ունի տարրական դպրոցում սովորողների կրթություն ստանալը, քանի որ այդ ժամանակահատվածը համարվում է առաջնային օղակներից մեկը կրթություն ստանալու և գիտելիքներն ամրապնդելու համար: Պետք է յուրաքանչյուրիս ամենօրյա աշխատանքի առանցքում լինի այսօրվա երեխայի կրթությունը, ով առաջին անգամ ոտք է դնում դպրոց: Անհրաժեշտ է կրթության ամբողջ գործընթացը կազմակերպել այնպես, որ երեխան հետաքրքրություն դրսևորի դպրոցի և ուսման նկատմամբ, ինչը կծառայի նրան ամբողջ կյանքի ընթացքում, որպես ինքնորոշված, սեփական խոսքը արժևորող, իրազեկ և իրավագիտակից քաղաքացու:

Ուսումնական գործունեության նկատմամբ մոտիվացիա ասելով հասկանում ենք բոլոր այն գործոնները, որոնք պայմանավորում են երեխայի ուսումնական ակտիվությունը, պահանջմունքները, նպատակները, պարտավորվածության զգացումը, հետաքրքրությունները բավարարելու գործընթացը:

Առանցքային նշանակություն ունեն և այն պատճառները, որոնք մոտիվացնում են սովորողին ուսումնական գործնթացին՝ հետաքրքրվածությունը ուսման հանդեպ, կրթություն ստանալու անհրաժեշտությունը, գովասանք ստանալու ցանկությունը և այլն:

Ուսումնական գործընթացում մոտիվացիայի ապահովման կարևորագույն գործոններից է նաև այն սոցիալական միջավայրը, որում երեխան գտնվում է, նրան շրջապատող մարդիկ՝ ծնողները, ուսուցիչները, դասընկերները և այլն:

Եթե ուսուցչի կողմից ուսումնական նյութը մատուցվում է տարբեր ինտերակտիվ, հետաքրքիր խաղային մեթոդներով, ապա այդ դեպքում, երեխայի մոտ հետաքրքրություն կառաջանա տվյալ ուսումնական նյութի նկատմամբ:

Աշակերտական, ընկերական միջավայրում ևս առաջանում է մոտիվացիա, եթե մանկավարժի կողմից ստեղծված է առողջ բարոյահոգեբանական միջավայր:

Պետք է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ տարրական դպրոցում սովորող աշակերտները չկրեն բացասական գործոնների ազդեցությունը՝ ուսումնական գործընթացից «հաճույք չստանալը», հետաքրքրության բացակայությունը, հաջողության չհասնելը, մեծահասակների հույսերը չարդարացնելը և այլն: Այս ամենի արդյունքում կարող ենք կանգնել չափազանց լուրջ խնդրի առջև: Ուսուցման նկատմամբ մոտիվացիայի բացակայությունը կարող է հանգեցնել ապահարմարման: Այսօր աշակերտ, իսկ վաղը որպես անձ, քաղաքացի՝ ով չի ունենա հետաքրքրություն, պատասխանատվություն, նպատակասլացություն, և որ ամենակարևորն է, մոտիվացիա ուսման, և ընդհանրապես կյանքի այլ ոլորտների նկատմամբ:

Վերոնշյալ պայմանների ապահովման դեպքում տարրական դպրոցի սովորողների շրջանում մոտիվացիան բարձր մակարդակի վրա կլինի: Նպաստելով դպրոցական միջավայրում սովորողի հարմարմանն ու սոցիալականացմանը, մոտիվացիայի բարձրացմանը, կրթությունը կհանդիսանա արդյունավետ ուսումնառության պայման:

Հետազոտության նպատակը.

Տարրական դպրոցի սովորողի ուսման մոտիվացիայի բարձրացմանն ուղղված մանկավարժական պայմանների մշակումն է:

Հետազոտական հարց

Արդյո՞ք հնարավոր է հետազոտական մեթոդներով տարրական դպրոցում պարզել աշակերտների ուսման նկատմամբ մոտիվացիայի պատճառները:

Ելնելով մեր ուսումնասիրության նպատակից՝ առաջադրել ենք հետևյալ **խնդիրները.**

1.Պարզել մանկավարժական գործընթացի նկատմամբ կրտսեր դպրոցականի տրամադրվածությունը:

2.Բացահայտել կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունները՝ մեծահասակների և հասակակիցների հետ ուսման նկատմամբ վերաբերմունքի ձևավորման գործում:

3.Մշակել կրտսեր դպրոցականի ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձրացման մանկավարժական պայմաններ:

1.1 Տարրական դպրոցի սովորողների հոգեբանամանկավարժական նկարագիրը

Տարրական դպրոցական տարիքի (6-7-ից մինչև 9-10 տարեկան) սկիզբը որոշվում է սովորողի դպրոց հաճախմամբ: Այն կարգավորում է հասակակիցների և մեծահասակների հետ շփման ողջ համակարգը, նրանց մոտ ձևավորում է տվյալ պահին կարևոր, առաջատար գործունեությունը՝ ուսուցումը:

Այլ խոսքերով, «հեղինակավոր մեծահասակները» արդեն ոչ միայն հարազատներն են, այլ նաև ուսուցիչը, որը դրսևորում է իր բարձր դիրքը ոչ թե որպես հարազատ, ունենալով հուզական և ջերմ հարաբերություններ, այլ սոցիալ-կանոնակարգային փոխազդեցության համակարգում:

Գիտնականների մեծ մասն այս տարիքի զարգացման առանձնահատկությունները հենց դպրոցի հետ են կապում: Որոշ գիտնականներ նույնիսկ գտնում են, որ դպրոցական այս տարիքը ոչ վաղ անցյալում է ձևավորվել, այն ժամանակներում, երբ սովորողները սկսել են շարունակական կրթություն ստանալ: Սա անշուշտ չափազանցություն է, բայց մի բան ճիշտ է, որ այս տարիքում հենց ուսումնական գործունեության ընթացքում են զարգացում ապրում շատ ճանաչողական գործընթացներ՝ մտածողություն, հիշողություն, ուշադրություն և այլն]:

Դպրոց ընդունվելիս երեխան, սովորաբար, թե ֆիզիկապես, թե հոգեբանորեն արդեն պատրաստ է ուսուցմանը, նախապատրաստված է իր կյանքի նոր կարևոր աստիճանին, այն բազմապիսի պահանջների կատարմանը, որը նրան ներկայացնում է դպրոցը: Հոգեբանական պատրաստվածությունը դիտվում է թե օբյեկտիվ, թե սուբյեկտիվ տեսակետից: Սովորողը դպրոցական ուսուցմանը հոգեբանորեն՝ զարգացման համապատասխան մակարդակով, պատրաստ է ամենից առաջ օբյեկտիվորեն, այսինքն պատրաստ է ուսուցմանը: Նրանք դպրոց ընդունվելու տարիքում արդեն ունեն որոշակի հաստատակամություն, կարող են իրենց առջև դնել առավել հեռահար նպատակներ և հասնել դրանց (թեև հաճախ գործը չեն հասցնում ավարտին), առաջին փորձերն են կատարում իրենց գնահատելու հասարակական

նշանակության դիրքերից, նրանց յուրահատուկ է պարտքի և պատասխանատվության զգացման առաջին դրսևորումները:

Վեցամյա երեխայի հոգեկան զարգացման բավարար մակարդակը գնահատվում է դպրոցական ուսուցումն սկսելու հնարավորության տեսակետից, այսինքն ընդունվում է որպես հոգեկան զարգացման ինչ-որ նվազագույն մակարդակ, որը շարունակական, պլանաչափ և նպատակաուղղված ուսուցման սկզբնավորման անհրաժեշտ նախադրյալ է:

Սուբյեկտիվ հոգեբանական պատրաստվածության էությունը կայանում է նրանում, որ դպրոց նոր հաճախած երեխաներին սովորաբար հատուկ են դպրոցում սովորելու ցանկությունները և ձգտումները, մեծահասակների հետ փոխհարաբերություններ կառուցելու նոր ձևերը: Երեխան հասկանում և սիրով ընդունում է ուսուցիչների հատուկ ուսումնադաստիարակչական դերը և պատրաստ է կատարելու նրանց բոլոր հանձնարարություններն ու կարգադրությունները

Դպրոցական ուսուցման սկիզբը համընկնում է երկրորդ կենսաբանական ճգնաժամի հետ (7տ.), երբ օրգանիզմում կատարվում է կտրուկ էնդոկրին տեղաշարժ, որն ուղեկցվում է մարմնի բուռն աճով, վեգետատիվ վերակառուցմամբ, այսինքն երեխայի սոցիալական հարաբերություններում արմատական փոփոխությունները համընկնում են օրգանիզմի բոլոր գործառույթների ու համակարգերի վերակառուցման հետ, ինչը պահանջում է մեծ լարվածություն և նրա պահեստային հնարավորությունների կենտրոնացում: Պահպանվում են աղջիկների ու տղաների զարգացման տեմպի տարբերությունները: Դպրոց հաճախելով՝ արմատապես փոխվում է երեխայի զարգացման սոցիալական իրավիճակը. Նա ձեռք է բերում սոցիալականապես նշանակալի պարտավորություններ, որոնց կատարման մակարդակը ստանում է համապատասխան հասարակական գնահատական:

Լ. Վիգոտսկին այս ճգնաժամի հիմնական ախտանշաններն է համարում անմիջականության, միամտության կորուստը, կամակորությունը, սեթևեթանքը: Ճգնաժամի կարևորուգույն առանձնահատկությունը, ըստ նրա, «…երեխայի անձնավորության ներքին և արտաքին ոլորտների տարբերակումն է»: Երեխան այս տարիքում սկսում է իմաստավորել սեփական ապրումները, ինչի շնորհիվ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ, ի հայտ է գալիս ապրումների սուր պայքար: Նշված հանգամանքները, ինչպես նաև այն, որ յոթ տարեկանում փոխվում է երեխայի զարգացման սոցիալական իրավիճակը, վերաբերմունքը միջավայրի և միջավայրի վերաբերմունքը նրա նկատմամբ, պայմանավորում են այս ճգնաժամը:

Լ. Բոժովիչը հետևյալ կերպ է մեկնաբանում «…Երեխայի մեջ տեղի է ունենում գիտակցված հակասություն նրա իրական հասարակական դիրքի և ներքին ձգտման միջև: Անցումը նոր դիրքին, երբ ժամանակին չի լինում, ապա երեխայի մեջ ի հայտ է

գալիս անբավարարվածություն, ինչն էլ պայմանավորում է ճգնաժամային շրջանում երեխայի վարքը»: Այլ կերպ ասած՝ նոր սոցիալական դիրքի հասնելու պահանջմունքի ֆրուստրացիան է պայմանավորում 7 տարեկանի ճգնաժամը:

Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը՝ նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռք բերումը, բնության ու հասարակության մասին շարունակական տեղեկությունների կուտակումը: Այս տարիքում շարունակաբար զարգանում և որակապես փոխվում են ճանաչողական գործընթացները՝ ձեռք բերելով միջնորդավորված և կամածին բնույթ: Որակապես փոխվում է նրա վարքի կամածին կարգավորման ընդունակությունը: Երեխան արդեն գործում է ոչ թե անմիջականորեն, այլ ղեկավարվում է գիտակցված նպատակներով, վարքի սոցիալականապես մշակված կանոններով ու եղանակներով, այսինքն այս տարիքում դրսևորվում է դրդապատճառային–պահանջմունքային ոլորտի նոր մակարդակ: Կրտսեր դպրոցական տարիքում սկսում է ձևավորվել միջանձնային հարաբերությունների նոր տեսակ. մեծահասակներն աստիճանաբար կորցնում են իրենց հեղինակությունը երեխաների համար և ավելի մեծ նշանակություն են ստանում հասակակիցները:

Երեխան ներգրավվում է իր համար նոր կոլեկտիվի մեջ, որտեղ նա ապրելու, զարգանալու և մեծանալու է տարիներ շարունակ: Իսկ դասարանական կոլեկտիվը պարզապես հասակակիցների խումբ չէ: Կոլեկտիվը ենթադրում է փոխադարձ պահանջկոտություն, փոխադարձ օգնության, կոլեկտիվ պատասխանատվության, կազմակերպվածության և կարգապահության բարձր մակարդակ: Տարրական դպրոցում տրվող գիտելիքները յուրացնելու համար կրտսեր դպրոցականը պետք է ունենա դիտունակության, կամային մտապահման, կազմակերպված ուշադրության զարգացման համեմատաբար բարձր մակարդակ, վերլուծման, ընդհանրացման, դատելու կարողություն:

Այս տարիքում էական փոփոխություններ են կրում երեխայի հույզերն ու զգացմունքները: Դպրոցում երեխան յուրացնում է ոչ միայն գիտելիքներ, այլև ուսուցչի կամ ծնողի կողմից ներկայացվող և մեկնաբանվող պատմությունների ու հեքիաթների միջոցով սովորում է շրջապատող աշխարհի տարբեր երևույթներին տալ համապատասխան հուզական-արժեքային գնահատական: Որքան շատ է կրտսեր դպրոցականը ծանոթանում արտաքին աշխարհին, այնքան բարդ և բազմաբնույթ են դառնում նրա հույզերն ու զգացմունքները:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի

առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրոնանալո ւկարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր է խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3-րդ դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ՝ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրու-թյան պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը :

Ի՞նչ է դպրոցական մոտիվացիան.

Հիմքում ընկած է երեխայի ինչ-որ պահանջմունք: Երեխան ծնվում, աշխարհ է գալիս բնածին պահանջմունքներով և ակտիվ գործունեության պահանջմունքով:

Այլ կերպ կարելի է անվանել «Հետաքրքրություն»: Այդ պահանջմունքի զարգացումը երեխային հնարավորություն է տալիս աճել և ձեռք բերել կյանքի փորձ:

Այդ պահանջմունքով էլ մոտիվացիան այս կամ այն նպատակին հասնելու, անհրաժեշտ գործունեության գնալու խթանումն է:

Զարգացման ընթացքում տեղի է ունենում ճանաչողական հետաքրքրությունների ներքին մոտիվացիա: Դժվարությունները հաղթահարելու ձգտում, ինտելեկտուալ ակտիվության դրսևորում:

Հաջորդ փուլը ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորումն է: Սովորողներին դուր է գալիս մտածել, քննարկել, հորինել նոր առաջադրանքներ: Նրանք ուղղակի հաճույք են ստանում այդ գործընթացից:

Դպրոցական մոտիվացիան կարելի է բաժանել 3 մակարդակի

- ✓ Բարձր մակարդակ, երբ երեխան ցանկություն ունի գնալ դպրոց: Նա ցանկություն ունի իմանալ մի նոր բան, շփվել համադասարանցիների, ուսուցչի հետ: Սովորողին դուր է գալիս իր նոր սոցիալական կարգավիճակը

որպես աշակերտ, ձգտում է համապատասխան լինել այդ նոր կարգավիճակին:

- ✓ Միջին մակարդակ, երբ սովորողը չի զգում ուսումնական գործընթացը, այլ միայն ցանկանում է շփվել երեխաների և ուսուցչի հետ: Նրան ավելի շատ գրավում է դպրոցական կյանքի արտաքին հատկանիշները՝ պայուսակ, դպրոցական պարագաներ:
- ✓ Ցածր մակարդակ, երբ սովորողը դպրոց գնալու ցանկություն չի ունենում: Նրան չի հետաքրքրում ուսումնական գործընթացը, միայն ցանկանում է խաղալ: Չի ցանկանում շփվել համադասարանցիների և ուսուցչի հետ:

Ուսումնական մոտիվացիան մի գործընթաց է, որը ստեղծում է հնարավոր ամեն ինչ ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար: Այն բարդ բազմաբովանդակ համակարգ է, որը կախված է աշակերտի նպատակներից, շարժառիթներից, հաստատակամությունից:

Ուսման դրդապատճառներն են.

1. Ճանաչողական մոտիվացիան արտահայտված հետաքրքրությունն է նոր գիտելիքների, նոր տեղեկատվության նկատմամբ: Այսպիսի մոտիվացիան ունի անհաշվենկատ բնույթ: Ճանաչողական շարժառիթները արտացոլում են սովորողի ինքնակրթվելու ձգտումը, գիտելիքների ավելացման, հմտությունների ինքնուրույն կատարելագործման ուղղությունը:
2. «Հեղինակության» մոտիվացիան հատուկ է այն սովորողներին, ովքեր ունեն բարձր ինքնագնահատական և առաջնորդին բնորոշ հակումներ: Այն սովորողներին մղում է ավելի լավ սովորելու և առաջինը լինելու: Մոտիվացիայի այս տեսակը հզոր շարժիչ ուժ է բարձր կարողություններ ունեցող անձանց զարգացման համար:
3. Սոցիալական մոտիվացիան լավ ապագա ունենալու համար սովորողի ձգտումն է: Այս դասին են պատկանում նաև այսպես կոչված դրական շարժառիթները, որոնք արտահայտվում են միջավայրում որոշակի դիրք զբաղեցնելու ձգտման, առաջատար լինելու ցանկության մեջ:
4. Շփման մոտիվացիա, այստեղ սովորողներն հետաքրքրություն են ցուցաբերում գործունեության այնպիսի տեսակների նկատմամբ, որտեղ առկա է հասակակիցների հետ շփումը:

Փոխհատուցող մոտիվացիան ի հայտ է գալիս վատ սովորող աշակերտի մոտ: Դրանք կողմնակի մոտիվներ են, որոնք թույլ են տալիս հարմարվել, հաստատվել այլ գործունեության միջավայրում. (սպորտ, երաժշտություն, նկարչություն): Այս դեպքում սովորողի ինքնագնահատվելու պահանջմունքը բավարարվում է ոչ ուսումնական

միջավայրում, և վատ առաջադիմությունը սովորողի վրա վատ ազդեցություն չի ունենում:

1. Հաջողության հասնելու մոտիվացիա, առաջադրանքը ճիշտ կատարելու, լավ արդյունք ստանալու ցանկությունն է, իր կիրթ, խելացի յուրահատուկ մարդ լինելու գիտակցումն է: Այն սովորողները, ովքեր սովորաբար մոտիվացված են հաջողության հասնելու, իրենց առջև դնում են նպատակ, և ուսուցումը նրանց մոտ առաջացնում է դրական էմոցիաներ, ներքին ռեսուրսների մոբիլիզացում և ուշադրության կենտրոնացում:
2. Սոցիալական մոտիվացիա, սովորողն աշխատում է հանուն գովասանքի և խրախուսանքի:
3. Անհաջողությունից խուսափելու մոտիվացիա, սովորողները աշխատում են խույս տալ անբավարար գնահատականներից և դրանցից բխող հետևանքներից (պատիժ ծնողների կողմից, ուսուցիչների դժգոհություն): Այդպիսի սովորողների նպատակն է՝ ոչ թե հասնել հաջողության, այլ ուղղակի խուսափել անհաջողություններից: Լարվածությունը, վատ գնահատական ստանալու վախը, ուսումնական գործընթացին բացասական, հուզական երանգ են հաղորդում:
4. Արտաուսումնական դպրոցական մոտիվացիա, այս մոտիավացիայի դեպքում սովորողը պարտաճանաչ հաճախում է դպրոց, սակայն հետաքրքրվում է ոչ թե ուսումնական գործընթացով, այլ դպրոցում առկա այլ պարապմունքներով՝ համերգներ, տոներ, ցուցահանդեսներ:

1.2 Տարրական դպրոցի սովորողների փոխհարաբերությունները մեծահասակների և հասակակիցների հետ

Ուսուցչի դերը սովորողների շրջանում մոտիվացիայի առաջացման գործում

Սովորողների ուսումնական գործնթացը դպրոցում կատարվում է ուսուցչի անմիջական ղեկավարությամբ: Նրա գործունեության նշանակությունը կայանում է սովորողների մեջ գիտակցական ակտիվ մասնակցության կազմակերպմամբ ուսումնական գործընթացին: Ուսուցիչը սովորողների առաջ խնդիրներ է դնում, որոնք աստիճանաբար դժվարեցնում է, և ցույց տալիս դրանց լուծման ճանապարհը: Ուսուցիչը ստեղծում է համապատասխան պայմաններ ուսումնական գործընթացի սահուն կատարման համար: Դնում է նպատակներ ու խնդիրներ, և սովորողներին

ուղղորդում դրանց լուծմանը, ընտրում և մատուցում է դրանց լուծման մեթոդները, որոնց օգնությամբ խնդիրները դառնում են հասանելի սովորողներին:

Ուսումնական գործընթացի կառավարումը ենթադրում է տարբեր եղանակներով առկա մանկավարժական գործընթաց և հենց ուղղակի մանկավարժական գործունեության՝պլանավորում, կազմակերպում, կառավարում, խթանում, ստուգում, գնահատում և արդյունքների վերլուծություն: Ուսուցչի գուծունեության պլանավորումը կայանում է թեմատիկ, ամսական կամ առարկայական պլանավորումը, կախված նրանից, թե ինչ խնդիրներ են անհրաժեշտ լուծել: Պլանների, պլան-կոնսպեկտների կամ կոնսպեկտների կազմումը, որով բնութագրվում է ուսուցչի փորձառությունը և վարպետության մակարդակը, նախորդում է երկարատև և տքնաջան աշխատանքի: Այն իր մեջ ներառում է սովորողների նախնական մակարդակի վերլուծությունը, նրանց ուսումնական կարողությունները, նյութական բազայի և մեթոդական հագեցվածության առկայությունը, իր անձնական հմուտ կարողությունները, առաջադրելու ունակությունները կոնկրետ դաստիարակչական և զարգացման ծրագրերի առաջադրմանը:

Ուսումնական գործընթացի ընթացքում ուսուցիչը պետք է օգնի առաջացող խնդիրների արդյունավետ լուծման ուղի գտնել՝ օգտագործելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են վարժությունների լուծման իրազեկումը, տնային աշխատանքների հասկանալի հանձնարարումը և այլն: Ժամանակակից դիդակտիկան ենթադրում է առաջացող խնդիրների լուծման շատ ճանապարհներ:

Ուսուցման գործընթացի, մանկավարժական գործունեության և՛ մեկ կարևոր խնդիրը կայանում է անձի ներդաշնակ զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծումը՝ կրտսեր սերնդին հասարակական կյանքի մեջ ներգրավվելուն ուղղված աշխատանքներում: Այդ խնդիրը լուծվում է անձի զարգացմանն ուղղված տարբեր գործընթացների և մասնագետների կողմից իրականացվող տարբեր եղանակների միջոցով, որոնք հստակ և ճշգրիտ են, և արդյունավետ կերպով ազդում են երեխայի անձի զարգացման վրա:

Հարաբերությունները համադասարանցիների (հասակակիցների) հետ

Դպրոց հաճախելու հետ առաջ է գալիս միջավայրին հարմարվելու խնդիր, որի ընթացքում, որպես կանոն առաջին դասարանցիների մոտ փոխվում է դպրոցի նկատմամբ ունեցած նախկին պատկերացումները: Սովորողները այնքան են տարվում իրենց նոր պարտականություններով, որ հաճախ մոռանում են շփվել

համադասարանցիների հետ և շատ հաճախ նույնիսկ մոտիկից չեն ճանաչում իրենց կողքի նստածին:

Այս ամենից ելնելով եզրակացնում ենք, որ սկզբնական շրջանում սովորողները խուսափում են միմյանց հետ շփումներից: Միմյանց հետ շփվում են ուսուցչի նախաձեռնությամբ: Կոլոմնիսկու եզրակացությունը, եթե երեխաներից մեկը մոռացել է գրիչ բերել, սովորողը չի դիմում իր ընկերներին, նա ընդհանրապես նստում և լռում է, երբեմն լացում, հուսալով, որ ուսուցիչը ուշադրություն կդարձնի իրեն: Այնուամենայնիվ, երբ ուսուցիչը տեսնում է և դիմում դասարանին, ավելորդ գրիչ ունեցողը չի տալիս անմիջապես աշակերտին, այլ տալիս է ուսուցչին: Տարրական դասարանի սովորողը անձ է, ով սկսում է «վարժվել» շրջապատին: Այդ ընթացքում սկսում է ձևավորվել ու զարգանալ սովորողների միջև շփումները, ընկերական հարաբերությունների դրսևորումը, անհատականության զարգացումը: Եթե սովորողների մոտ ստացվում է ընկեր դառնալ իր հասակակիցների հետ, ապա նշանակում է, որ հենց այդ սովորողի հետ արդեն մյուսների համար շփվելը հաճելի է:

Սոցիալական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընկերություն ասվածը ունի որոշակի դինամիկա: 5-7 տարեկանները, ում հետ խաղում են, հետո այդ երեխաների հետ նստում են նույն նստարանին, ապրում են նույն հարկում, շենքում և այլն: Բնութագրելով իրենց ընկերներին՝ նրանք ասում են, որ նրանց հետ հեշտ է շփվելը, իսկ ընկերական հարաբերությունները, ինչպես արագ կարող են սկսվել, այնպես էլ արագ կարող են ավարտվել: Տարիքի հետ սովորողները ավելի հաճախ մտերմանում են նրանց հետ, ովքեր իրենց օգնում է դպրոցական առաջադրանքները լուծել, առաջանում է փոխադարձ համակրանքի և վստահության մթնոլորտ:

Աստիճանաբար դպրոցական կյանքի իրականության ըմբռնման հետ սովորողի մոտ զարգանում է անհատականությունը:

Սոցիոմետրիկ հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ աշակերտի դիրքը դասարանական հարաբերություններում որոշվում է մի շարք դրույթներով, սովորողների մի մասը ընկերների որոշմամբ դառնում է աստղ, նրանք աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով, շփվող են, կազմակերպող, հարուստ երևակայությամբ, աղջիկները աչքի են ընկնում գեղեցիկ արտաքինով, կարող են նաև լինել լավ սովորողներ:

Սովորողների մեջ աչքի չընկնող երեխաները նույնպես ունեն որոշակի առանձնահատկություններ, նրանք չեն շփվում, ձգտում են միայնության, կռվարար են, ունեն որոշակի կամակորություններ, կոպիտ են հաճախ, նրանցից շատերը անփույթ են և անվճռական:

Այսպիսով սովորողները ավելի հաճախ հասակակիցներին գնահատելու ժամանակ մեծ հաշվով հաշվի են առնում նաև ուսուցչի գնահատականը:

Անձնական փոխհարաբերությունները միմյանց միջև առանձնահատուկ դեր ունեն յուրաքանչյուր անհատի համար, այդ իսկ պատճառով սովորողների ցածր դիրք ունենալը հասակակիցների շրջանում, նրանք հոգեպես ծանր են տանում և հաճախ առաջ է բերում բացասական դրսևորումներ: Նրանք ձգտում են մտերմանալ հասակակիցների հետ, ստեղծել իրենց ընկերական շրջանակը, երեխաներին հանել կղզիացված վիճակից և դարձնել ավելի շփվող:

1.3 Ուսումնական գործընթացի հանդեպ կրտսեր դպրոցականի մոտիվացիայի բարձրացմանն ուղղված մանկավարժական պայմաններ

Ոսուցումը որպես գործունեության տեսակ ունի իր յուրահատուկ կառուցվածքը: Այստեղ մեծ դեր ունեն ոսուցչի անձնային և մասնագիտական որակներն ու կարողությունները. նրա՝ ուսուցման ճիշտ մեթոդիկա ընտրելու հնարավորությունը: Ուսուցման նպատակը կայանում է միջավայրի, աշխարհի, գիտելիքների առարկայական ճանաչումը և ընդհանրապես սովորողների աշխարհընկալման զարգացումը: Ուսուցման մեջ կարևորը այն մոտիվացիան ու գաղափարներն են, որով առաջնորդվում է սովորողը:

Ուսուցման ընթացքում, որպեսզի ուսուցումը կայանա, պետք է լինեն որոշակի դրդապատճառներ, որոնք սովորողին կմղեն առաջնորդվել դեպի դրված նպատակը, դեպի որոշակի գիտելիքների և կարողությունների ստացմանն ու ամրապնդմանը: Սովորողի ուսուցմանը խթանում է ոչ թե մեկ, այլ մի քանի դրդապատճառներ՝ որոնցից յուրաքանչյուրը ազդում է ոչ թե ինքնուրույն այլ ընդհանուր համագործակցությամբ: Այսպիսով ուսուցումը ունի բազմաշերտ բնույթ:

Ուսումնական գործընթացի ընթացքում ուսուցիչը պետք է օգնի առաջացող խնդիրների օպտիմալ լուծմանը, օգտագործելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են վարժությունների լուծման իրազերկումը, տնային աշխատանքների հասկանալի հանձնարարումը և այլն: Ժամանակակից դիդակտիկան ենթադրում է առաջացող խնդիրների լուծման շատ ճանապարհներ: Ուստի ուսուցչի կողմից ներքոնշյալ պայմանների ստեղծման դեպքում, ուսման նկատմամբ սովորողների մոտիվացիայի մակարդակը կլինի ավել բարձր: Իրազեկող խնդիրը պետք է ելնի տվյալ առարկայական ծրագրից, որ պահպանվի գիտության հաջորդականությունը և առարկայական ուսուցումը:

Ոսուցումը ենթադրում է ուսումնական գործընթացի կարգավորում և կառավարում, անընդհատ ընթացիկ վերահսկողությամբ, այսինքն տեղեկատվության ստացումը սովորողների կողմից պետք է զուգակցել հասկանալի նպատակային միջոցների և

մեթոդների օգնությամբ: Ուսուցման ընթացիկ գնահատումը և արդյունքները կատարվում են բանավոր և գրավոր հանձնարարությունների ստուգմամբ, որի արդյունքում ուսուցչի կողմից գնահատվում է առարկայի յուրացվածությունը սովորողների կողմից, որոշում է ուսուցման այս կամ այն ձևի ճշտությունը, ուսուցման գործընթացի կրկնությունը, արագացումը կամ դանդաղեցումը: Այստեղ մեծ դեր է կատարում լավ սովորողների ակտիվության դրդումը և ինքնուրույնության զարգացումը: Մեծ դեր ունեն ինքնուրույն աշխատանքների հանձնարարումը և քննարկումը, առանձին խմբերի ստեղծումը և անհատական աշխատանքները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 Տարրական դպրոցում սովորողների ուսման մոտիվացիայի բացահայտումը:

Հետազոտությունն իրականացվել է Տավուշի մարզի Ոսկեվանի միջնակարգ դպրոցի 3–րդ դասարանում:

Հետազոտությանը մասնակցել են 15 սովորողներ:

Հետազոտական աշխատանքում կիրառել ենք դիտման, հարցաթերթի և Ելֆիմովի՝ «Տարրական դպրոցի սովորողների շրջանում ուսման նպատակները» մեթոդիկան:

Սովորողներին ուղղված հարցաթերթի նպատակն էր բացահայտել 3-րդ դասարանի սովորողների շրջանում մոտիվացիան ուսման նկատմամբ:

3– րդ դասարանի ովորողների շրջանում կիրառել ենք նաև՝ Ն. Վ. Ելֆիմովի՝ «Տարրական դպրոցի սովորողների շրջանում ուսման նպատակները» մեթոդիկան՝ ուղղված մոտիվացիայի մակարդակի բացահայտմանը:

Մեր աշխատանքի համար հիմք ընդունեցինք մի շարք սկզբունքներ. գաղտնիության, համագործակցության և միասնականության, դրականի վրա հենվելու, սովորողների ձայնը լսելի դարձնելու, նրանց կարծիքը և ցանկությունը հաշվի առնելու, նրա անձը հարգելու սկզբունքները:

Աշխատանքի արդյունավետ իրականացման համար առանձնացրինք պայմաններ, որոնց հետևելու դեպքում կվաստակենք սովորողների, նրանց ծնողների և ուսուցիչների վստահությունը.

- Կարողանալ նրանց լսել և չընդհատել
- Հարգել նրանց կարծիքը
- Ստեղծել վստահելի մթնոլորտ
- Լինել խորհրդատու

□□Ստեղծել համագործակցային միջավայր

15 սովորողների շրջանում իրականացրած հարցաթերթերը կազմված է եղել 8 հարցից:

Իրականացրել ենք նաև դիտումներ սովորողների շրջանում մոտիվացիայի մակարդակի բացահայտելու և գնահատելու նպատակով: Արդյունքում ամբողջ դասարանի համար ստացանք ներքոնշյալ պատկերը:

Հարցաթերթային հարցման արդյունքներ

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ



Հարցվածների 95%-ը գնում է դպրոց սովորելու և գիտելիք ստանալու միայն 10-(5 %-ը) հետաքրքրությամբ չի սովորում, իսկ մնացածի մոտ նկատվում է ուսման նկատմաբ հետաքրքրության բարձր ցուցանիշ: Բոլոր սովորողը համապատասխանաբար (100%-ը) կցանկանար, որ դպրոցը վերանորոգված լիներ: 10-ը (95%-ը) ազատ ժամանակ սիրում են խաղալ համակարգչով, իսկ մնացածը՝ սովորել դասերը: Բոլորն էլ սիրում են իրենց ուսուցչուհուն: Հարցվածներից 10 (95%) աշակերտի համար ծնողներն ունեն մեծ նշանակություն և, հետևելով նրանց օրինակին, երեխաները մեծ հաճույքով են հաճախում դպրոց: Իսկ մյուսները ուղղակի գնում են դպրոց, որ հանդիպեն ընկերներին: 90%-ը սիրում է հանգստյան օրերը, չի ուզում գնալ դպրոց, իսկ մնացածը սիրում են գնալ դպրոց: Բոլորն էլ (100%) սովորողների համար կարևոր է շփումը դասընկերների հետ:

Մեթոդիկայի իրականացում

Իրականացրել ենք Ն. Վ. Ելֆիմովի՝ «Տարրական դպրոցի սովորողների շրջանում ուսման նպատակները» մեթոդիկան: Մեթոդիկայի իրականացման արդյունքում կպարզենք, թե սովորողները ինչ շարժառիթներ, նպատակներ ունեն՝ ճանաչողական և սոցիալական, ինչը մոտիվացիա է հաղորդում նրանց դպրոց հաճախելու, ուսումնական գործընթացում ակտիվորեն ներգրավվելուն և գիտելիք ստանալու հարցում:



Ինչպես երևում է *10 համապատասխանաբար* (*95 %*) *սովորողի մոտ առկա էին և՛ սոցիալական, և՛ ճանաչողական նպատակներ*: Այս տիպի շարժառաիթները ավելի շատ միտված էին հանրությանը օգտակար լինելուն, այսինքն նրանք կարևորում էին ստացած գիտելիքներն օգտագործել ոչ միայն ի նպաստ իրենց, այլև սոցիալական տարբեր խավերի: Նրանք սովորում են, որպեսզի կարողանան ստացած գիտելիքներով օգտակար լինեն մարդկանց, որ ուսուցիչը և ծնողները գոհ լինեն իրենցից և ուսուցչի կողմից արժանանան բարձր գնահատականի և գովեստի, ինչպես նաև շատերը սովորում են, որպեսզի ընկերական շրջապատում լինեն հարգված և սիրված:

Որպես այդպիսին այս տիպի շարժառիթները ավելի շատ միտված էին սեփական անձի այսպես կոչված հաջողության հասնելուն: Կարևորելով ճանաչողական շարժառիթը, ավելի շատ ուսման մեջ կարևորում էին՝ սովորել ամեն ինչ իմանալու նպատակով, ուսումնական գործընթացը նրանց դուր էր գալիս, ուզում էին սովորել,

որ ինչ-որ խնդրի առաջացման դեպքում իրենց սեփական ուժերով կարողանան գտնել լուծումներ, ստացած գիտելիքները կարողանան օգտագործել իրենց ամբողջ կյանքի ընթացում:

Իսկ մնացած համապատասխանաբար (5%) *սովորողների մոտ առկա էին սոցիալական նպատակներ:* Այս տիպի շարժառիթները ավելի շատ միտված էին սեփական անձի կարևորության ընդգծմանը և ինքնագանահատականի բարձրացմանը, որ ուսուցիչը և ծնողները գոհ լինեն իրենցից, և ուսուցչի կողմից արժանանան բարձր գնահատականի և գովեստի, ինչպես նաև շատերը սովորում են, որպեսզի ընկերական շրջապատում լինեն հարգված և սիրված:

«Կարտոֆիլի տնկում» խաղ–վարժության անցկացում ֆիզիկական կուլտուրա դասաժամի ընթացքում, որի նպատակներ էր 3 –րդ դասարանի աշակերտների մոտ բարձրացնել մոտիվացիայի մակարդակը:

Դասարանի աշակերտները բաժանվում են երկու հավասար խմբի ու կազմում միասյուն շարք' միմյանց կողքի 2-3 մ հեռավորությամբ: Շարքերի առջև 10-20 քայլ տարածության վրա նշագծվում են 4-6 շրջաններ' միմյանցից մեկ-եր կու քայլ հեռավորությամբ: Շարքերի ուղղապահներին տրվում է մեկական տոպրակ' մեջը շրջանների թվով սեղանի թենիսի կամ դաշտային թենիսի գնդակներ: Ազդանշանով ուղղապահները սկսում են վազքը, յուրաքանչյուր շրջանակի մեջ:դնե լով մեկական գնդակ ու վազքով վերադառնում մինչև իրենց շարքը, դատարկ տոպրակը հանձնում շարքի հաջորդ խաղացողին, իսկ իրենք կանգ նում վեր ջում: Տոպրակով խաղացողները վազում են դեպի շրջանները, հավաքում գնդակները, վազքով վերադառնում իրենց շարքը և տոպրակը հանձնում հաջորդ խաղացողին, որը պետք է գնդակները դնի շրջանների մեջ: Այսպես, մինչև բոլորը խաղան: Խաղը շահում է վարժությունը շուտ ավարտած խումբը: Խաղը կրկնվում է 3-4 անգամ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցի սովորողների ուսման մոտիվացիայի գործում ուսումնասիրության և վերլուծության արդյունքում եկել եմ հետևյալ եզրակացության.

Մանկավարժահոգեբանական գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունը մեզ հնարավորություն են տալիս տարբերակել և կարևորել տարրական դպրոցի սովորողի մոտիվացիան ուսման նկատմամբ. պահանջմունքների, հետաքրքրությունների, հնարավորությունների հաշվառումը և մանկավարժական գործընթացում դրա ներդրումը հանդիսանում է յուրաքանչյուր երեխայի մոտիվացիայի նախապայման:

- Ուսումնական գործընթացի կազմակերպում սովորողների միջև առանց համեմատականներ անցկացնելու սկզբունքի:
- Սովորողի համար ստեղծի ինքնաճանաչման և ինքնադրսևորման միջավայր և հնարավորություններ:
- Սովորողի մոտ ձևավորի նպատակներ դնելու և դրանց հասնելու կարողություններ և հմտություններ:
- Սովորողին սխալվելու հնարավորություն տալու և ինքնուրույն իր սխալներն ուղղելու հմտության ձևավորում:
- Սովորողի ինքնատիպ և ուժեղ կողմերի բացահայտում և ուսումնական գործընթացի կազմակերպում հենց այս սկզբունքների հիման վրա:
- Դասաժամերի կազմակերպում՝ արտադասարանական և արտադպրոցական ձևով, խաղ -դասերի միջոցով:

Սովորողների համար ստեղծել ուսման հավասար հնարավորություններ և պայմաններ:

Յուրաքանչյուր երեխայի կարծիքն ազատորեն արտահայտելու հնարավորության ստեղծում:

- Տանը և դպրոցում երեխայի համար ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման նպաստավոր պայմանների առկայություն:
- Նախադպրոցական տարիքից երեխայի մեջ կրթությունը որպես արժեք գաղափարի սերմանում:

- Երեխայի և համադասարանցիների հետ համագործակցութանը նպաստող միջոցառումների կազմակերպում:

- Դպրոց հաճախելու վերաբերյալ մեծահասակի դրական օրինակի առկայություն:
- Կրտսեր դպրոցականների կողմից կարգապահական կանոնների մշակում:

- Իրենց սոցիալական դերերի մասին՝ իրավունքների և պարտականությունների իմացություն և դրանց պահպանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խուդոյան Ս. Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, Զանգակ – 97, 2004:

2. Выготский Л. С <<Мышление и речь>>// Собр. Соч.: В 6 т. – М., 1984 Т. 2. с.221.

3. Игумнов С.А. <<Психотерапия и психокоррекция детей и подростков>> М.:Изд-во Инст-а психотерапии, 2000.- с. 112

4. http://rdd.kz/ru/v-pomash-vospitateluy/item/255-shkolnaya-motivacia.html
5. http://psihologn.org/index.php/psihologamm/470-rol-semi-v-povyshenii-uchebnoj-motivatsii-shkolnika